ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 1-ին և 2-րդ հարցերին:

«Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու… հատուցումն ա՞յս եղավ: Բայց այս մահը երանի՛ թե ձիու վրա ինձ հասներ»:

1 **Հայոց սպարապետներից ո՞վ է ասել վերը բերված խոսքերը:**

1) Վաչե Մամիկոնյան
2) Աշոտ Բագրատունի
3) Մուշեղ Մամիկոնյան
4) Սմբատ Բագրատունի

2 **Նշված ճակատամարտերից ո՞րն է գլխավորել խոսքերի հեղինակ սպարապետը:**

1) Ցլու գլուխ լեռան ճակատամարտ
2) Արյան լճի ճակատամարտ
3) Ձիրավի ճակատամարտ
4) Վարդանակերտի ճակատամարտ

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 3-րդ և 4-րդ հարցերին:

«Նա հավատարիմ պահապանն էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:

3 **Հայոց թագավորներից ո՞ւմ է այսպես բնութագրել պատմիչը:**

1) Սանատրուկ
2) Վռամշապուհ
3) Արտաշես I
4) Տիգրան II

4 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Արիանոս
2) Պլուտարքոս
3) Տակիտոս
4) Ապպիանոս

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 5-րդ և 6-րդ հարցերին:

«…Ժողովուրդը ոտքի է կանգնել և իր հազարավոր զավակներին մղում է դեպի ռազմի դաշտ…. Վերջին պատերազմական ու քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել: Այսօր այդ հիվանդությունը բուժվում է, հին խիզախությունը վերածնվում է, և այդ փրկության միակ իրական ելքն է մեր դժվարին պայմաններում ու ժամանակներում: Ի զե՛ն, մեր քաջե՛ր, դեպի՛ ռազմադաշտ»:

5 **Ո՞ր մարմինն է վերը բերված կոչի հեղինակը:**

1) Թիֆլիսի Կենտրոնական Հայոց ազգային խորհուրդ
2) Հայոց ազգային բյուրո
3) Արևմտահայ ազգային խորհուրդ
4) Երևանի Հայոց ազգային խորհուրդ

6 **Ի՞նչ իրադարձության կապակցությամբ է արտահայտվել վերոհիշյալ միտքը:**

1) Վանի 1915 թ. հերոսամարտ
2) Ուրֆայի 1915 թ. հերոսամարտ
3) Զեյթունի 1896 թ. հերոսամարտ
4) 1918 թ. Մայիսյան հերոսամարտ

7 **Ո՞վ է ստորև ներկայացվող խոսքերի հեղինակը:**

«…Հույս կա, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Անգլիան ու Ֆրանսիան ուժ կտան մեր պահանջներին, և մոտ ապագայում կստեղծվի ազատ Հայաստան: Համենայն դեպս, այդ հույսով ենք ապրում բոլորս և միայն դրա համար աշխատում»:

1) Հովհաննես Թումանյան
2) Սիմոն Վրացյան
3) Գևորգ Ե Սուրենյանց
4) Ալեքսանդր Խատիսյան

8 **Ո՞ր պայմանագրի կնքման կապակցությամբ է արտահայտվել վերոհիշյալ միտքը.**

«Մենք չենք կարող երբևիցէ հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:

1) Ալեքսանդրապոլի պայմանագիր
2) Կարսի պայմանագիր
3) Մոսկվայի պայմանագիր
4) Բաթումի պայմանագիր

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 9-րդ և 10-րդ հարցերին:

«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:

9 **Ո՞ր փաստաթղթից է մեջբերումը:**

1) Հայոց ազգային խորհրդի բանաձև
2) Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ
3) ՀՀ բյուրո-կառավարության որոշում
4) Հայաստանի անկախության մասին հռչակագիր

10 **Ե՞րբ է ստորագրվել այդ փաստաթուղթը:**

1) 1919 թ. մայիսի 28
2) 1920 թ. ապրիլի 28
3) 1920 թ. մայիսի 28
4) 1919 թ. ապրիլի 28

Կարդացե՛ք մեջբերված խոսքը և պատասխանե՛ք 11-րդ և 12-րդ հարցերին:

«Դիմում է ՄԱԿ-ի անդամ պետություններին, միջազգային կազմակերպություններին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից, միավորել իրենց ջանքերը պատմական արդարությունը վերականգնելու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար»:

11 **Ո՞ր փաստաթղթից է մեջբերումը:**

1) ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության նիստի որոշում
2) «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր»
3) ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշում
4) «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրություն

12 **Ե՞րբ է ընդունվել այդ փաստաթուղթը:**

1) 1999 թ. սեպտեմբերի 22
2) 2014 թ. փետրվարի 22
3) 2015 թ. հունվարի 29
4) 2009 թ. հոկտեմբերի 10

13 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

1) 1918 թ. մայիսին Դանիել Բեկ-Փիրումյանի գլխավորությամբ ստեղծված զորախումբը կոչվում էր Երևանյան դիվիզիա:
2) 1844 թ. Կոստանդնուպոլսում ստեղծված և հայ համայնքի գործերի կազմակերպմանը մասնակցող մարմինը կոչվում էր Երեսփոխանական ժողով:
3) Արևմտահայ զորաբաժնի ստեղծման նպատակով կյանքի կոչված օրենսդիր մարմինը կոչվում էր Հայաստանի անվտանգության խորհուրդ:
4) Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության կողմից ստեղծած վարչական միավորը կոչվում էր Թուրքահայաստան:

14 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

1) Կիլիկյան Հայաստանի արքունիքի մեջ մտնում էին արքունի խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը, գործակալությունները:
2) Բագրատունյաց թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված զորքը հայտնի էր ոստանիկ այրուձի անվամբ:
3) Կիլիկյան Հայաստանի արքունի եկամուտները և ծախսերը տնօրինող գործակալը կոչվում էր կանցլեր:
4) Պալատական արարողությունների և Արշակունյաց շառավիղների դաստիարակության համար պատասխանատու գործակալը կոչվում էր թագադիր ասպետ:

15 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները:**

ա. Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու նպատակով ԱՄՆ–ում Հայ հեղափոխական դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է Հայկական ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ:

բ. «Այլախոհ» հասկացությունը խորհրդային երկրում ի հայտ եկավ 1960–ական թթ. և բնութագրում էր մարդկանց, ովքեր գաղափարական պայքար էին մղում խորհրդային իշխանության և նրա գաղափարախոսության դեմ:

գ. Հայկական համաշխարհային կոնգրեսի առաջարկով կազմված պատվիրակության՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալին ներկայացված փաստաթուղթը կոչվում էր միացյալ Հայաստանի անկախության հռչակագիր:

դ. ԽՍՀՄ-ում հաստատված ամբողջատիրական համակարգին բնորոշ գծերից էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը:

ե. ԽՍՀՄ 1936 թ. նոր Սահմանադրությամբ Հայաստանը հռչակվեց միութենական հանրապետություն և կոչվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

զ. ԽՍՀՄ-ում զանգվածային ձերբակալությունների և հանիրավի բռնությունների ենթարկված քաղաքացիներին անվանում էին «ժողովրդի թշնամիներ»:

է. Իոսիֆ Ստալինի մշակած «ՌՍԴԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը» ստացել է «Ինքնավարացման ծրագիր» անվանումը:

ը. 1920 թ. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի կողմից ձևավորված մարմինը կոչվում էր «Միության և համագործակցության խորհուրդ»:

1) բ, զ, ը
2) գ, ե, է
3) ա, դ, զ
4) գ, դ, ը

16 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

ա. Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվեց Հայաստանի փրկության կոմիտե (ՀՓԿ):
բ. Պետական մարմինը, որը ընդունել է «Լեռնային Ղարաբաղի մարզում իրադրությունը կարգավորելու միջոցառումների մասին» որոշումը, կոչվել է ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ:
գ. Արցախահայության իններորդ համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված անկախ մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
դ. Խորհրդայնացումից հետո ՀՍԽՀ-ում ստեղծված իշխանության տեղական օրենսդիր մարմինները կոչվում էին ժողովրդական կոմիսարիատներ:
ե. Թուրքական զորքի կողմից հայկական մի շարք տարածքներում ստեղծած «անկախ հանրապետությունների» կառավարությունները, որոնք հրաժարվում էին ենթարկվել ՀՀ կառավարությանը, կոչվում էին «շուրաներ»:
զ. 1987 թ. հունիսի 18-ին 1915 թ. հայերի ցեղասպանությունը դատապարտած մարմինը կոչվում էր Եվրոպական միություն:
է. Հունաստանի ազատագրական բանակի շարքերում ֆաշիստների դեմ կռվող հայկական պարտիզանական ջոկատը հայտնի էր «Ազատություն» անունով:
ը. Մոսկվայում 1921 թ. ստորագրված խորհրդա–քեմալական հակահայկական փաստաթուղթը կրում էր «Ռուս–թուրքական անկեղծ բարեկամության և փոխօգնության» պայմանագիր անվանումը:

1) բ, ե, է
2) բ, դ, է
3) ա, գ, ը
4) ա, ե, զ

17 **Վանի թագավորության արքաներին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Ասորեստանյան աղբյուրներում Վանի թագավորությունը կոչվում է Արարատ, իսկ տեղական արձանագրություններում՝ Նաիրի և Բիայնիլի:
բ. Իշպուինիի կառավարման երկրորդ շրջանում կատարվել է կրոնական բարեփոխում՝ ստեղծվել է միասնական դիցարան թագավորության համար:
գ. Մենուան, մի շարք հաղթանակներ տանելով Ասորեստանի նկատմամբ, Վանի թագավորությունը վերածել է գերտերության:
դ. Արգիշտի I-ի գահակալության ժամանակաշրջանում Վանի տերությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը:
ե. Ռուսա II-ին հաջողվել է բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերների հետ:
զ. Թիգլաթպալասար III-ը Ռուսա I-ի օրոք արշավել է Արդինի-Մուսասիր և թալանել Խալդիի տաճարը:
է. Ռուսա I-ը Սևանա լճի ավազանում կառուցել է երկու խոշոր ամրոցներ՝ անվանակոչելով Խալդի և Շիվինի աստվածների անուններով:

1) գ, դ, ե
2) դ, զ, է
3) բ, գ, ե
4) ա, գ, է

18 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

ա. Խղճի ազատության սկզբունքը Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը համարում էր ազգը պառակտող գաղափար։
բ. Անտոն Գարագաշյանը հասարակական առաջադիմության վճռական ուժ է համարել լուսավորությունը։
գ. Արմաշի վանքում բացված կրթօջախն արևմտահայերի համար ունեցավ նույն նշանակությունը, ինչ Լազարյան ճեմարանն՝ արևելահայերի համար։
դ. Պերճ Պռոշյանի անմիջական ջանքերով Շուշիում և Երևանում բացվել են երկսեռ դպրոցներ։
ե. 19-րդ դարի վերջին արևմտահայության մեծ մասին հասանելի էր կրթությունը։
զ. «Բազմավեպ» պարբերականը տպագրվում է 1843 թվականից առ այսօր։
է. 19-րդ դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում գործող պետական դպրոցներում ուսուցման պարտադիր լեզուներն էին հայերենն ու ռուսերենը։

1) ա, գ, զ
2) բ, դ, ե
3) ա, բ, զ
4) բ, դ, է

19 **Տրված պնդումներից ո՞րն է սխալ։**

1) Հայաստանի անկախության մասին հռչակագրով վերականգնվում էին Հայ առաքելական եկեղեցու ոտնահարված իրավունքները։
2) Հայ նշանավոր ճարտարագետ–էներգետիկ Հովսեփ Տեր–Աստվածատրյանը գլխավորում էր Հայաստանի հիդրոտեխնիկական շինարարությունը։
3) 1938 թ. Արմֆանի նախագահ է նշանակվել արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին։
4) Գերմանացի ֆաշիստների դեմ պայքարող հերոսուհի պարտիզան Հերմինե Ռազգրադյանը Ռումինիայից էր։

20 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

ա. 2015 թ. հունվարից Հայաստանը դարձել է Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ և իր ակտիվ մասնակցությունը բերել կազմակերպության կայացման գործընթացին:

բ. Խորհրդային Հայաստան 1921–1936 թթ. և 1950–1982 թթ. ընթացքում միասին վերցրած ավելի շատ մարդ է հայրենադարձվել, քան Մեծ հայրենադարձության տարիներին:

գ. Մինչև Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումը երկրում արդեն ներդրվել էր բազմակուսակցական համակարգ:

դ. ԽՍՀՄ կառավարության որոշմամբ՝ 1947 թ. Խորհրդային Հայաստան պետք է ներգաղթեին շուրջ 63 հազար սփյուռքահայեր, սակայն մի շարք պատճառներով հանրապետությունը կարողացել է ընդունել միայն 25 հազար մարդ:

ե. 1962–1982 թթ. անհատական կարգով և առանձին խմբերով աշխարհի 40 երկրներից Հայաստան է ներգաղթել մոտ 42 հազար մարդ:

զ. Թուրքիայի կողմից 1974 թ. Կիպրոսի հյուսիսային մասի բռնազավթումն այնտեղ բնակվող հայության մի մասի արտագաղթի պատճառ է դարձել:

է. 2011 թ. ՀՀ նախագահի առաջարկությամբ ստեղծվել է հանրային խորհուրդ՝ Վազգեն Մանուկյանի նախագահությամբ:

1) բ, զ, է
2) բ, ե, է
3) ա, գ, դ
4) ա, դ, ե

21 **Նշված պատճառներից որո՞նք են նպաստել Կիլիկյան Հայաստանի համար բարենպաստ միջազգային իրադրության ստեղծմանը XII դարի վերջին:**

ա. Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվել էր Կիլիկիայից:
բ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր միջազգային առևտրի ամենախոշոր կենտրոնը:
գ. Խաչակիրների պետությունները դադարել էին գոյություն ունենալուց Արևելքում:
դ. Եգիպտոսի սուլթանությունը որոշ ժամանակ զբաղված էր խաչակրաց տիրույթների նվաճումով:
ե. Կիլիկյան Հայաստանը ռազմաքաղաքական դաշինք էր հաստատել Վենետիկի և Ջենովայի հետ:
զ. Իկոնիայի սուլթանությունը պատրաստվում էր դիմագրավելու խաչակրաց երրորդ արշավանքին:
է. Ամրապնդվել էր դաշինքը մոնղոլների հետ:

1) ա, գ, է
2) ա, դ, զ
3) բ, ե, զ
4) բ, դ, ե

22 **Տրվածներից որո՞նք են 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների հետևանքներ:**

ա. Թուրքիան մեծացրել է թաթարներին ցուցաբերվող գաղտնի օգնությունը:
բ. Հայությունը մարտական լուրջ փորձառություն անցավ:
գ. Գերիշխող է դարձել արևելահայության և արևմտահայության միասնության գաղափարը:
դ. Ցարիզմը չեղյալ է համարել հայ եկեղեցական գույքը բռնագրավելու մասին օրենքը:
ե. Բարձրացել է հայ մտավորականության դերը արևելահայության կյանքում:
զ. Բարձրացել է հայերի վստահությունն իրենց ուժերի նկատմամբ:
է. Սկսել է արծարծվել Արևելյան Հայաստանի ինքնավարության գաղափարը:

1) ա, ե, զ

2) բ, գ, զ
3) գ, ե, է
4) բ, դ, է

23 **Տրվածներից որո՞նք են Հայոց Մեծ եղեռնի հետևանքներ։**

ա. Վերացվել են 1500 հայկական կրթօջախներ։
բ. Ավելի քան 2,5 միլիոն արևմտահայությունից կոտորվել է 1,5 միլիոնը։
գ. Մահմեդականացվել են մոտ 350 հազար հայեր՝ հիմնականում երիտասարդ տղամարդիկ և կանայք։
դ. Հայերի շարժական և անշարժ գույքը վերադարձվել է իրենց ժառանգներին։
ե. Ամերիկյան բանկերում պահվող արևմտահայերի ավանդները տրվել են թուրքական իշխանություններին։
զ. Հայոց հայրենիքի մեծ մասը հայաթափվել է։
է. Տեղահանված 300 հազար հայեր վերաբնակվել են Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի տարբեր վայրերում։

1) բ, ե, զ, է
2) ա, բ, զ, է
3) բ, գ, ե, զ
4) ա, գ, դ, զ

24 **Թվարկվածներից որո՞նք գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանքներ չեն։**

ա. 1930–ական թթ. վերջին Հայաստանում կար ավելի քան 1000 կոլտնտեսություն։
բ. Մենատնտես գյուղացիությունը վերափոխվել է կոլտնտեսային գյուղացիության։
գ. ԽՍՀՄ–ը դարձել է աշխարհի ամենահզոր արդյունաբերական երկիրը։
դ. Գյուղացիության մի մասը համալրեց քաղաքային բնակչության, բանվոր դասակարգի շարքերը։
ե. Ծավալվեց նեպը, և զարգացան ապրանքադրամական, շուկայական հարաբերությունները։
զ. Գյուղացիների տեղաշարժը կասեցնելու համար խլեցին նրանց անձնագրերը։
է. Նյութական շահագրգռվածության սկզբունքի վրա հիմնված սոցիալիստական տնտեսաձևի առկայության պայմաններում բոլոր կոլտնտեսություններն արձանագրել են տնտեսական բարձր ցուցանիշներ։

1) դ, ե, զ

2) գ, ե, է
3) բ, գ, է
4) ա, բ, զ

25 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի գումարումը:
բ. Մեծ Հայքի բաժանումը Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև:
գ. Վարդան Կրտսերի ապստամբության սկիզբը:
դ. Վաչագան Բարեպաշտի գահակալման սկիզբը:
ե. Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
զ. Արուճի իշխանական պալատի կառուցումը:

1) բ, դ, ա, գ, ե, զ
2) ա, դ, բ, ե, զ, գ
3) ա, ե, բ, զ, գ, դ
4) բ, ա, դ, ե, գ, զ

26 **Տիգրան Մեծի գործունեության հետ կապված իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Պտղոմայիս քաղաքի նվաճումը:
բ. Հայկական բանակի մուտքը Կապադովկիա:
գ. Վիրքի և Աղվանքի հպատակեցումը:
դ. Հայ-պարթևական հաշտության պայմանագրի կնքումը:
ե. Հայոց արքայի բազմելը Սելևկյան գահին:
զ. Կորդուքի միացումը Մեծ Հայքին:

1) զ, բ, գ, դ, ե, ա
2) գ, ա, բ, դ, զ, ե
3) զ, գ, բ, ա, դ, ե
4) գ, զ, բ, դ, ա, ե

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 27-րդ և 28-րդ հարցերին:

«Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»

27 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Ֆրանսուա Ռաբլե

2) Ջովանի Բոկաչչո
3) Թոմաս Մոր
4) Նիկոլո Մաքիավելի

28 **Թվարկված աշխատություններից ո՞րն է գրել խոսքերի հեղինակը:**

1) «Տիրակալը»
2) «Արևի քաղաքը»
3) «Դեկամերոն»
4) «Ուտոպիա»

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 29-րդ և 30-րդ հարցերին:

«…Վարշավան, Պրահան, Բեռլինը, Վիեննան, Բուդապեշտը, Բելգրադը, Բուխարեստը, Սոֆիան՝ այս բոլոր հայտնի քաղաքները և այդ շրջանների բնակչությունը գտնվում են խորհրդային գոտում և ենթարկվում են այս կամ այն ձևով ոչ միայն խորհրդային ազդեցությանը, այլ նաև Մոսկվայի զգալիորեն ուժեղացող վերահսկողությանը…»:

29 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Հարի Թրուման
2) Կլեմենտ Էտլի
3) Ջորջ Բուշ Ավագ
4) Ուինսթոն Չերչիլ

30 **Որտե՞ղ են ասվել վերը բերված խոսքերը:**

1) Մեծ Բրիտանիա
2) Լեհաստան
3) Հարավսլավիա
4) ԱՄՆ

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 31-րդ և 32-րդ հարցերին:

«Դուրս գալով անախորժություններով լի այս ժամանակներից մեր 5-րդ նպատակը կլինի նոր աշխարհակարգը, որը կարող է ի հայտ գալ իբրև նոր դարաշրջան՝ ահաբեկչության սպառնալիքից ավելի ապահովագրված, ավելի հզոր՝ արդարության հետապնդման գործում և ավելի ապահով՝ խաղաղության որոնումներում…»:

31 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը:**

1) Ջորջ Բուշ Ավագ
2) Վլադիմիր Պուտին
3) Ջորջ Բուշ Կրտսեր
4) Միխայիլ Գորբաչով

32 **Ե՞րբ է ասվել մեջբերված խոսքը:**

1) 1991 թ. դեկտեմբերի 8
2) 2001 թ. սեպտեմբերի 11
3) 2000 թ. մայիսի 15
4) 1990 թ. սեպտեմբերի 11

33 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

1) Ինվենստիտուրա էր կոչվում այն արարողությունը, երբ սենյորը ավատը հանձնում էր վասալին:
2) Խաչակիրները Բյուզանդիայից զավթած տարածքներում ստեղծել են խաչակրաց պետություն՝ Երուսաղեմի թագավորությունը:
3) Սովորութային իրավանորմերի հիման վրա ստեղծված օրենսգիրքը Ֆրանկական թագավորությունում կոչվում էր «Ազատությունների մեծ հրովարտակ»:
4) Հռոմի պապի աշխարհիկ պետությունը Միջին Իտալիայում կոչվում էր Սրբազան հռոմեական կայսրություն:

34 **Տերմինների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ։**

1) Ավտարկիա՝ նշանակում է ինքնապահովում։
2) Դիրիժիզմը նախատեսում էր պետության միջամտությունը կրթության ու մշակույթի կառավարմանը։
3) Իրանի Իսլամական Հանրապետությունում 12 հոգևոր և աշխարհիկ գործիչներից կազմված վերահսկիչ խորհուրդը գլխավորող առաջնորդը կոչվում է ռահբար։
4) Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետության տնտեսության թռիչքաձև զարգացումը կոչվում է «գերմանական հրաշք»։

35 **Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ։**

1) Տերությունների հետ երկարատև բանակցությունների արդյունքում Հիտլերը իրավունք է ստացել Գերմանիայում մտցնել ընդհանուր զինվորական ծառայություն։
2) 1950-ական թթ. սկզբին տեղի են ունեցել խորհրդա-չինական ռազմական ընդհարումներ։
3) 1946 թ. Իտալիայում անցկացված հանրաքվեում ժողովուրդը քվեարկել է միապետության հռչակման օգտին։
4) 1921 թ. խորհրդա-իրանական պայմանագրով Իրանն իրավունք է ստացել Կասպից ծովում նավատորմ պահել և ազատ առևտուր անել։

36 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Հարավային Գերմանիայում ինդուլգենցիաների վաճառքը հանձնարարվել էր Ֆրանցիսկյան միաբանության անդամներին:

բ. Ռեֆորմացիոն շարժումը սկսվել է Շվեյցարիայի Վիտենբերգ քաղաքում Ժան Կալվինի 95 դրույթների հրապարակումով:

գ. Հուգենոտների առաջնորդ Հենրիխ Բուրբոնը ընդունել է կաթոլիկություն և դարձել Ֆրանսիայի թագավոր:

դ. Ռեֆորմացիոն շարժումը հատկապես սուր բնույթ է ընդունել Անգլիայում և վերածվել երկարատև քաղաքացիական պատերազմի:

ե. Երեսնամյա պատերազմը ավարտվել է Բուրբոնների պարտությամբ:

զ. Ուտրեխտի միությունը հիմք է դրել Միացյալ Գավառների Հանրապետության ստեղծմանը:

է. Վեստֆալյան հաշտության պայմանագրով Իսպանիան վերջնականապես հրաժարվել է Նիդերլանդներից:

1) դ, ե, զ
2) բ, գ, ե
3) գ, զ, է
4) ա, գ, է

37 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Վերսալյան հաշտության պայմանագրով Գերմանիան կորցրեց իր տարածքի 1/8-րդ մասը և զրկվեց իր բոլոր գաղութներից:

բ. Վերսալյան հաշտության պայմանագրով Ֆրանսիան ստացավ Էլզասը, Լոթարինգիան և Սաարի մարզը:

գ. Անգլիացի տնտեսագետ Ջ. Քեյնսը բացահայտեց Մեծ ճգնաժամի պատճառները և հիմնավորեց, որ պետությունը պետք է կարգավորի տնտեսության զարգացումը և ապրանքների բաշխումը:

դ. ԽՍՀՄ-ի տնտեսությունը 1925 թ. դրությամբ գլխավոր ցուցանիշներով հասել էր նախապատերազմյան մակարդակին:

ե. Թուրքիան հանրապետություն է հռչակվել 1921 թվականին:

զ. Ականավոր հեղափոխական Սուն Յաթսենի գլխավորած կառավարության քաղաքականությունը հենվում էր երեք գլխավոր սկզբունքների վրա՝ ազգայնականություն, ժողովրդավարություն և հասարակության բարօրություն:

է. Իրանի Մեջլիսի որոշմամբ Ռեզա խանը 1921 թ. հռչակվել է շահ:

1) բ, ե, է
2) բ, գ, ե
3) ա, գ, զ
4) ա, դ, զ

38 **Գիտատեխնիկական հեղափոխությանը (ԳՏՀ) վերաբերող հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ:**

1) ԳՏՀ երկրորդ փուլը բնութագրող նվաճումներից են՝ անհատական համակարգիչը, բջջային հեռախոսը, համացանցը և այլն:
2) ԳՏՀ երկրորդ փուլում է սկսվել տիեզերքի յուրացման գործընթացը:
3) ԳՏՀ շնորհիվ ի հայտ են եկել սպասարկման և հանգստի նոր ոլորտներ:
4) ԳՏՀ առաջին փուլում արձանագրվել են խոշոր նվաճումներ՝ ատոմային ռումբ, էլեկտրոնային հաշվիչ մեքենա, Երկիր մոլորակի արհեստական արբանյակ և այլն:

39 **Թվարկվածներից որո՞նք են Իվան IV Ահեղի գործունեության հետևանք:**

ա. Տապալվել է Ոսկե հորդայի տիրապետությունը:
բ. Ռուսաստանը բաժանվել է 50 նահանգների:
գ. Ստեղծվել են կառավարման համապետական միավորներ՝ պրիկազներ:
դ. Քաղաքները ստացել են ինքնակառավարման իրավունք:
ե. Մտցվել է զինվորական ծառայության նոր կարգ՝ ըստ ծագման և ըստ հավաքագրման:
զ. Ռուսական եկեղեցին դարձել է ինքնուրույն՝ չենթարկվելով Կոստանդնուպոլսի պատրիարքին:
է. Ռուսական պետությանը միացվել են Կազանը, Ուկրաինան, Մերձբալթիկան:

1) գ, ե, զ
2) ա, դ, զ
3) գ, դ, ե
4) ա, գ, է

40 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա. Ճապոնիայի վարչապետ Տանակայի կողմից ծավալապաշտական ծրագրի մշակումը:
բ. Սևրի պայմանագրի կնքումը:
գ. Սիրիա պետության ստեղծումը:
դ. «Ֆաշի դի կոմբատիմենտո»-ի հիմնումը:
ե. ԱՄՆ-ի և Գերմանիայի միջև առանձին հաշտության պայմանագրի կնքումը Առաջին աշխարհամարտից հետո:
զ. ԽՍՀՄ-ի ստեղծումը:
է. «Նոր կուրսի» քաղաքականության գործադրումը ԱՄՆ-ում:
ը. Լոզանի հաշտության պայմանագրի կնքումը:

1) ե
2) ը
3) է
4) զ

41 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Շումերական բնագրերում հիշատակվող Հայկական լեռնաշխարհի՝ մինչ օրս հայտնի առաջին վաղ պետական կազմավորումը կոչվում է Արատտա:
2) Ըստ հայկական ավանդազրույցի Հայկ նահապետի ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացել է Հայաստանի «Արմենիա» անվանումը:
3) Հնդեվրոպական նախահայրենիքն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը, Միջին Ասիան, Միջագետքի և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները:
4) Վանի թագավորության շրջանում օգտագործված սեպագիրը կոչվում էր հիերոգլիֆ:
5) Հայկական հելլենիզմի պատմության երկրորդ փուլը կոչվում է «բուն հելլենիստական» ժամանակաշրջան:
6) Վանի թագավորությունում գործում էր Ավագների խորհուրդը, որի անդամները համարվում էին արքայի «խորհրդականներ»:
7) Հայկազուն-Երվանդականների օրոք զորքի գերագույն հրամանատարը կոչվում էր առաջին սպարապետ:

42 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) Մինչ 1919 թ. սկիզբը Զանգեզուրի վարչական իշխանությունն իրականացնող մարմինը կոչվել է Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ:
2) Առաջին աշխարհամարտի ժամանակ հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքները գլխավորող մարմինը կոչվել է Հայոց ազգային բյուրո:
3) 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի առաջին ամիսներին կազմակերպված զորամիավորումները կոչվել են կամավորական գումարտակներ:
4) 19-րդ դարի կեսերին թուրքական իշխանությունների կողմից արևմտահայ գյուղացիությունից գանձվող գլխավոր հարկը կոչվել է աշար:
5) Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող Հասան կալա բերդը, նրա գրավումից հետո, Ա. Պուշկինն անվանել է Արզրումի (Էրզրումի) բանալի:
6) Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով-Դաշկովի զբաղեցրած պաշտոնը կոչվում էր Կովկասի կառավարչապետ:

7) Զանգեզուրը բոլշևիկյան զորքերից ազատագրելուց հետո Գ. Նժդեհի ղեկավարությամբ երկրամասը կառավարելու համար ստեղծված մարմինը կոչվել է Զանգեզուրի հայոց ազգային խորհուրդ:

43 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթով Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվում էր Ազգային խորհուրդ:
2) 1991 թ. սեպտեմբերի 2–ին Ստեփանակերտում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունված որոշումը հայտնի է «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» անունով:
3) 1991 թ. դեկտեմբերի 8–ին Բելոռուսիայի Բելովեժյան անտառում կայացած հանդիպման ժամանակ որոշվել է ստեղծել նոր միություն՝ Ինքնիշխան Պետությունների Միություն անունով:
4) Արցախյան շարժումը ղեկավարելու համար 1988 թ. փետրվարի 22-ին ստեղծված մարմինը կոչվում էր «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»:
5) 1989 թ. հունվարի 11–ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից ԼՂԻՄ–ում ստեղծված կառավարման մարմինը կոչվում էր «Հատուկ կառավարման կոմիտե»:
6) 1989 թ. օգոստոսի 16–ին Ստեփանակերտի պետական թատրոնի շենքում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում 80 հոգուց ընտրված մարմինը կոչվում էր Ազգային խորհուրդ:
7) Նոր Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1990 թ. նոյեմբերի 15–ին ստեղծված մարմինը կոչվում էր «ՀՀ Ազգային ժողովի սահմանադրական հանձնաժողով»:

44 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Տրդատ II-ի թագավոր հռչակվելուց հետո հայերը ջախջախում և Հայաստանից դուրս են վտարում Կարակալլայի ուղարկած զորքը:
2) Տրդատ II արքան Հռոմեական կայսրությունում գտնվելու տարիներին կայսեր փոխարեն մենամարտել է գոթերի իշխանի հետ:
3) Ոսխայի ճակատամարտում հայ-հռոմեական միացյալ ուժերը ջախջախել են պարսից Ներսեհ արքայի զորքին:
4) Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի ժամանակ հայկական ուժերը Արտագերս ամրոցում ուժգին դիմադրություն են ցույց տվել Կորբուլոնի զորքին:
5) Մեծ Հայքի դրածո թագավորներից Արտավազդ IV-ը վարել է Հայաստանի պետական շահերից բխող քաղաքականություն:
6) Վաղարշ II-ի և Սեպտիմիոս Սևերոսի միջև կնքված պայմանագրով կայսրը գումար էր վճարելու հայոց այրուձիին՝ Կովկասյան լեռնանցքների պաշտպանության համար:
7) Մեծ Հայքի թագավորությունում դրածո թագավորների կառավարման շրջանը Մովսես Խորենացին բնութագրել է որպես «ժամանակ անիշխանության»:

45 **Մեծ Հայքի Արշակունյաց արքայատոհմի կառավարման շրջանում տեղի ունեցած իրադարձություններին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Մանվել Մամիկոնյանը տեր կանգնելով Մամիկոնյան տոհմի տանուտերությանը՝ հայոց թագավոր Վարազդատից պահանջել է հեռանալ երկրից:
2) Հայոց արքա Տիրանը, ելնելով պետականության շահերց, մշտապես համագործակցել է Հուսիկ կաթողիկոսի հետ:
3) Խոսրով IV արքան, ստանալով Շապուհ III-ի համաձայնությունը, հայոց կաթողիկոս է նշանակում Սահակ Պարթևին:
4) Խոսրով III Կոտակի հրամանով աշխարհատեր նախարարներից ոչ ոք չպետք է մարտի գնար արքունի զորքի հետ:
5) Հայոց կաթողիկոս Գրիգորիսի մարմինը ամփոփված է Արցախի Ամարաս գյուղում՝ Վրթանեսի կառուցած եկեղեցում:
6) Հայ եկեղեցու առաջին ժողովը հրավիրել է Ներսես Ա կաթողիկոսը

Այրարատ նահանգի Շահապիվանի Մայր եկեղեցում:

7) Պապ արքայի օրոք հաստատվել է Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնուրույնությունը:

46 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) «Հայրենասերների միություն» խմբակը խնդիր էր դրել Եվրոպական երկրների օգնությամբ հասնել Արևելյան Հայաստանի ազատագրությանը:
2) «Սև խաչ» գաղտնի կազմակերպությանը աջակցել է Վանի ռուսական փոխհյուպատոսը:
3) 1850-60-ական թթ. հայ ազատական հոսանքի ներկայացուցիչների մեծ մասը հայ ժողովրդի կյանքի փոփոխությունը կապել է ապստամբական գործողությունների հետ:
4) Ամենայն հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացու ջանքերի շնորհիվ Նադիր շահը չեղյալ է համարել Արարատյան դաշտի հայերի մի մասին Պարսկաստանի խորքերը փոխադրելու իր հրամանը:
5) Միքայել Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրությունը կապում էր սոցիալական, համաեվրոպական արդար հասարակարգի ստեղծման հետ:
6) 18-րդ դարում Ամենայն հայոց կաթողիկոսները թուրք և պարսից տիրակալներից բազմիցս պահանջել են մահմեդականություն ընդունած հայերին զրկել իրենց հարազատների ունեցվածքն առաջնահերթ ժառանգելու իրավունքից:
7) Հայ ազատական միտքը 1870-80-ական թթ. թևակոխել է ազգայնականության փուլ:

47 **Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Ալեքսանդրապոլի հայ-թուրքական հաշտության պայմանագրով Հայաստանը զրկվում էր բանակ պահելու իրավունքից:
2) Դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով Հայաստանը հայտարարվել է «Սոցիալիստական Խորհրդային անկախ Հանրապետություն»:
3) Երևանում նախաստորագրված «Եզրափակիչ որոշման արձանագրությամբ» Ռուսաստանի և Ադրբեջանի կառավարությունները ճանաչում էին Հայաստանի իրավունքները Ղարաբաղի նկատմամբ:
4) 1920 թ. նոյեմբերի 19-ին տեղի ունեցած հայ-ռուսական հանդիպման ժամանակ Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչները խորհրդայնանալու դիմաց խոստանում էին նպաստել Հայաստանի 1914 թ. նախապատերազմյան սահմանների վերականգնմանը:
5) Բաքվում հրավիրված ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի համատեղ նիստը ընդունել է հայ- ռուսական «Հաշտության պայմանագրի» նախագիծը:
6) Հայ-ռուսական դեկտեմբերյան համաձայնագրով իշխանությունը անցնում է զինվորական հրամանատարությանը՝ Ռուբեն Տեր-Մինասյանի և ՌՍԴԽՀ կոմիսար Մդիվանիի համատեղ ղեկավարությամբ:
7) Երևանում նախաստորագրված «Եզրափակիչ որոշման արձանագրությամբ» Ռուսաստանը Հայաստանին տրամադրելու էր 4,5 մլն ռուբլի անհատույց օգնություն:

48 **Թվարկված պատմական իրադարձություններից որո՞նք են Արտաշես I-ի գործունեության հետևանք:**

1) Ստեղծվեց կանոնավոր և լավ զինված բանակ:
2) Ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:
3) Սահմանազատվեցին համայնքային և պետական հողերը:
4) Կոմմագենեն միացվեց հայկական պետությանը:
5) Սահվանվեց թագավորի և նրա նախնիների պաշտամունքը:
6) Պոնտոսից հետ նվաճեց Տմորիքը:

7) Երկիրը վերածվեց թեոկրատական պետության:

49 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում պայմանագրերի իրական հետևանքները:**

1) Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Էրզրումը և Բասենը վերադարձվել են Օսմանյան կայսրությանը:
2) Գյուլիստանի հաշտության պայմանագրով Ռուսաստանին են անցել Անապան, Փոթին, Կարսը, Մակուն:
3) 1736 թ. Էրզրումի պայմանագրով Պարսկաստանը կրկին վերականգնել է իր դիրքերը Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում:
4) Ադրիանուպոլսի պայմանագրով Ռուսաստանին են անցել նաև Ախալքալաքն ու Ախալցխան:
5) 1724 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով Թուրքիան ստացել է Շիրվանից արևելք ընկած երկրամասերը:
6) Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին էր մնում միայն Ալաշկերտը՝ շրջակա գավառներով:
7) Բրեստ–Լիտովսկի պայմանագրով ռուսական զորքը տեղակայվելու էր Կարսի և Բաթումի մարզերում:

50 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:**

1) Մայիսյան հերոսամարտերում ծանր հարվածներ ստանալու հետևանքով Թուրքիան հարկադրված էր Բաթումի բանակցությունների ընթացքում մեղմել իր պահանջները և Սուրմալուի գավառի մի մասը զիջել հայերին:
2) Մեծ Բրիտանիայի և Ավստրա-Հունգարիայի ճնշման հետևանքով Ռուսաստանը համաձայնել է Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայել Բեռլինում:
3) Առաջին համաշխարհային պատերազմի կողմ դառնալու հետևանքով Հայաստանի առաջին Հանրապետությունը մասնակցել է Բրեստ–Լիտովսկի պայմանագրի կնքմանը:
4) Վանի հայության հուլիսյան նահանջի գլխավոր պատճառը անգլո-ռուսական հակասությունների խորացումն էր:
5) Անգլո-ֆրանսիական զորքերի կողմից իրականացված Դարդանելի գործողության պատճառը Կովկասյան ռազմաճակատում գործող դաշնակից ռուսական զորքերին աջակցելն էր:
6) Առաջին աշխարհամարտի ժամանակ հայ կամավորական խմբերի ստեղծման պատճառներից մեկը ռուսական զորքի օգնությամբ Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը հասնելու ձգտումն էր:
7) 17-րդ դարի վերջերին հայ ազգային ուժերի կողմից Ավստրիայի և եվրոպական այլ երկրների հակաթուրքական համագործակցությանն ապավինելու պատճառը Ֆրանսիայի կողմից Թուրքիայի պաշտպանությունը ստանձնելն էր:

51 **Տրվածներից որո՞նք են Փետրվարյան ապստամբության հետևանքներ:**

1) Խորհրդային իշխանությունը ձեռնարկել է բնակչության ունեցվածքի կամայական բռնագրավումներ:
2) Սթափեցնող ազդեցություն է ունեցել խորհրդային իշխանությունների վրա, ստիպել է առավել զգուշորեն գործել:
3) Սկսվել է Խորհրդային Հայաստանի տնտեսության արդյունաբերացումը:
4) Հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու նպատակով Հայհեղկոմը համաներում է ընդունել:
5) Կտրուկ վատթարացել է գյուղացիության դրությունը:

6) Խորհրդային իշխանությունները ձեռնամուխ են եղել հայկական բանակի աքսորված սպաներին հանրապետություն վերադարձնելու գործին:
7) Արցախը և Սյունիքը մնացել են ՀՍԽՀ կազմում:

52 **Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները:**

1) 17-րդ դարում առաջացած փոխկապակցված երկու գրական ուղղություններից մեկը կոչվում էր բարոկկո, մյուսը՝ նատուրալիզմ:
2) 19-րդ դարի առաջացած գրականության և արվեստի նոր ուղղությունը՝ սիմվոլիզմը, թարգմանաբար կոչվում է խորհրդապաշտություն:
3) Երկրորդ համաշխարհային պատերազմի Արևմտյան ռազմաճակատում 1939 թ. սեպտեմբերից 1940 թ. մայիս ընդգրկող ժամանակաշրջանը կոչվում է «տարօրինակ պատերազմ»:
4) ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի տնտեսական քաղաքականությունը կոչվել է ռեյգանոմիկա:
5) Խաղաղությանը չհավատացողներին անվանում են պացիֆիստներ:
6) Ամերիկա աշխարհամասից դուրս բռնի ուժով իր ազդեցությունը տարածելու ԱՄՆ-ի քաղաքականությունը կոչվում է «մեծ մահակի» քաղաքականություն:
7) Խորհրդային Ռուսաստանի առաջին բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվել է Ժողովրդավարական կոմիսարների խորհուրդ:

53 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Սպարտայում ավագների խորհուրդը կոչվում էր գերուսիա:
2) Սպարտայի գերագույն օրենսդիր մարմինը կոչվում էր էկլեսիա:
3) Սպարտայում անձնապես ազատ աքայացիների հետնորդներին անվանում էին հելոտներ:
4) Դորիացիների կողմից նվաճված աքայացիներին անվանում էին պերիօյկոսներ:
5) Աթենքի գլխավոր գործադիր պաշտոնյան կոչվում էր արքոնտ:
6) Աթենքի գերագույն օրենսդիր մարմինը կոչվում էր ապելլա:
7) Աթենքի տոհմային ավագանու ներկայացուցչին անվանում էին էվպատրիդ:

54 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Տնտեսության որոշ ճյուղերի, հողի և մասնավոր սեփականության տարբեր ձևերի վերածումը պետական սեփականության կոչվում է ազգայնացում:
2) Դեն Սյաոպինը Չինաստանը ճգնաժամից հանելու նպատակով սկսեց իրագործել նոր քաղաքական կուրս, որն ստացել է «Մեծ թռիչք» անունը:
3) Ներուի ջանքերի շնորհիվ Հնդկաստանը դարձավ միջազգային կառույցի անդամ, որը հայտնի է «Չմիավորված երկրների կոալիցիա» անվամբ:
4) Առաջին աշխարհամարտում պարտված երկրների կողմից հաղթող երկրներին վճարվող փոխհատուցումը կոչվում էր ռեպատրիացիա:
5) Ֆաշիստական Գերմանիայում 10-18 տարեկան երեխաներին ընդգրկող շարժումը կոչվում էր Հիտլերյուրգենդ:
6) Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների ընդունած օրենքները կոչվում էին դեկրետներ:
7) Մի պետության կողմից մյուս պետության ամբողջ տարածքի կամ դրա մի մասի բռնի միավորումը կոչվում է ագրեսիա:

55 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) 1990-1991 թթ. բուռն իրադարձություններով սկսվել է Արաբական գարունը:
2) Շանհայի կազմակերպությունը հիմնադրել են Չինաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը և Հնդկաստանը:
3) 2008 թ. օգոստոսին Վրաստանը պատերազմ սկսեց ընդդեմ Հարավային Օսիայի:
4) Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը լուծարվել է 1989 թվականին:
5) ԱՄՆ-ի վարչակազմի «ժողովրդավարության ընդլայնումը» ենթադրում էր, որ ԽՍՀՄ-ի նախկին արևելաեվրոպական դաշնակիցները կդառնան ՆԱՏՕ-ի անդամ:
6) 2001 թ. օգոստոսի 12-ին Եվրամիության և ԱՄՆ-ի միջնորդությամբ Սերբիայի կառավարության և ալբանական համայնքի ներկայացուցիչների

միջև կնքվել է հաշտության համաձայնագիր:

7) Հայաստանը ներգրավված է «Եվրաատլանտյան համագործակցության խորհուրդ» կազմակերպությունում:

56 **Թվարկվածներից որո՞նք են հանդիսանում Պերիկլեսի գործունեության արդյունք:**

1) Մտցվեց բողոքարկման համակարգը:
2) Ստեղծվեց ատենակալների դատարանը:
3) Բնակչությունը բաժանվեց գույքային խմբերի:
4) Պաշտոնի դիմաց մտցվեց վարձատրություն:
5) Վերացվեց պարտային ստրկությունը:
6) Մտցվեց օստրակիզմը:
7) Էկլեսիան վերածվեց պետության իրական ղեկավար մարմնի:

57 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:**

1) Ռուսաստանում 1917 թ. տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխության հետևանքով իշխանության եկան ազգային քաղաքական ուժերը:
2) 20-րդ դարի սկզբին աշխարհի վերաբաժանման համար պայքարի ահագնացման հետևանքով արդյունաբերական քաղաքակրթության ճգնաժամը ստացել է համաշխարհային բնույթ:
3) Բալկանյան առաջին և երկրորդ պատերազմների հետևանքով սրվել են հակասությունները Անգլիայի և Ռուսաստանի միջև:
4) 20-րդ դարի սկզբի ռուս-ճապոնական պատերազմը հետևանք էր Չինաստանի հյուսիսարևելքում, Կորեայում, Սախալինում և այլ տարածքներում իրենց գերիշխանությունը հաստատելու Ռուսաստանի և Ճապոնիայի ձգտմանը:
5) 20-րդ դարի սկզբին համաշխարհային տնտեսության փլուզման հետևանքով տարբեր երկրների միջև խորացել է մրցակցությունը հայրենական ապրանքների սպառման շուկաների համար:
6) ԱՄՆ-ում արդյունաբերական քաղաքակրթություն ձևավորվելու հետևանքով այն ստացել է ամերիկակենտրոն անվանումը:
7) 1916 թ. Արևելյան ճակատում Ավստրո-Հունգարիայի ջախջախման հետևանքով Իտալիան փրկվել է վերջնական պարտությունից:

58 **Թվարկվածներից որո՞նք են երևույթների կամ իրադարձությունների իրական հետևանքներ:**

1) Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ԱՄՆ–ը, ԽՍՀՄ–ը և Ֆրանսիան միավորվեցին և իրենց ղեկավարների ջանքերով ստեղծեցին հակահիտլերյան միություն:
2) Թեհրանի խորհրդաժողովում կայացված համաձայնության արդյունքում ԽՍՀՄ–ը երեք ամիս անց միացել է իր դաշնակիցներին ու պատերազմ սկսել Ճապոնիայի դեմ:
3) Երկրորդ աշխարհամարտի ժամանակ սկիզբ է առել և հետո շարունակվել համաշխարհային գաղութային համակարգի փլուզման գործընթացը, որի արդյունքում ստեղծվել են բազմաթիվ նոր պետություններ:
4) Հնդկաստանում 1931 թ. սկսված քաղաքացիական անհնազանդության ևս մեկ հուժկու շարժման արդյունքում Գանդին ու նրա չափավոր կողմնակիցները անհաջողություն ունեցան:
5) Առաջին աշխարհամարտից հետո Չինաստանի կենտրոնական իշխանությունը թուլացել էր օտարերկրյա տերությունների՝ հատկապես ԱՄՆ–ի, Գերմանիայի և Ֆրանսիայի միջամտության հետևանքով:
6) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ամեն կերպ փորձում էին ֆաշիստական խմբավորման ուժերն ուղղել ԱՄՆ-ի դեմ, ինչը նույնպես էական դեր խաղաց Երկրորդ աշխարհամարտի սանձազերծման գործում:
7) 1940 թ. հունիսի 22–ի անձնատվության պայմանագրով Ֆրանսիայի տարածքի 2/3–ը բռնազավթվել է Գերմանիայի կողմից, իսկ մնացած մասում ստեղծվել է խամաճիկային կառավարություն:

59 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1) Երկրորդ աշխարհամարտից հետո Իտալիան «հաղթող երկրների մեջ պարտված» պետություն էր, որովհետև ոչ միայն չունեցավ տարածքային ձեռքբերումներ, այլև կրեց նյութական ու մարդկային խոշոր կորուստներ։
2) Խորհրդային երկիրը 1928-1940 թթ. ընթացքում որակական թռիչք ապրեց, որի արդյունքում Խորհրդային Միությունը դարձավ հետարդյունաբերական հզոր երկիր։
3) Քեմալականները, խուսանավելով Անտանտի և Խորհրդային Ռուսաստանի միջև, 1920–1922 թթ. կարողացել են նախ հաջողության հասնել Հայաստանի, այնուհետև Հունաստանի դեմ պատերազմներում։
4) Նախկին Ռուսաստանյան կայսրության տարածքում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո առաջացել է տնտեսության նոր տարաձև՝ կոմունիստականը, որը ավարտուն տեսք է ստացել 1920–ական թթ. վերջին։
5) Գերմանիայում սուր պայքար էր գնում կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների միջև, որը ևս նացիստների կողմից իշխանությունը նվաճելու պատճառ է դարձել։
6) Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից տարվում էր Գերմանիայի խաղաղեցման քաղաքականություն, որի հետևանքով Հիտլերը կարողացել է նվաճել Ավստրիան, Իսպանիան և Հունգարիան։
7) Մուսսոլինիի կարևոր ձեռքբերումներից էր Վատիկանի հետ պայմանագրի կնքումը 1929 թ., որի արդյունքում Իտալիան և Վատիկանը միմյանց ճանաչեցին որպես սուվերեն պետություններ։

60 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1) Ասիայի ու Աֆրիկայի նորաստեղծ պետությունների զգալի մասի որոշումը՝ չկապել իրենց ճակատագիրը երկու գերտերություններից (ԽՍՀՄ, ԱՄՆ) և ոչ մեկի հետ, հետևանք է Շարլ դը Գոլի քաղաքական ազդեցության։
2) Հետպատերազմյան տնտեսական հարաբերություններում նոր երևույթ էր վերազգային և բազմազգ կորպորացիաների գործունեության ծավալումը, որն ի վերջո հանգեցրել է համաշխարհայնացման արդի գործընթացին։
3) Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Չինաստանում կոմունիստների և գոմինդանականների միջև ծավալված քաղաքացիական արյունալի պատերազմի արդյունքում հաղթեցին գոմինդանականները։
4) Ֆաշիզմի ջախջախման գործում ունեցած իր մեծ ներդրման արդյունքում անանախադեպ աճել է Մեծ Բրիտանիայի հեղինակությունը, ընդլայնվել է նրա ազդեցության ոլորտը ամբողջ աշխարհում։
5) Կապիտալիստական աշխարհում անվիճելի առաջատար դարձած ԱՄՆ–ը համակերպվել էր ԽՍՀՄ–ի քաղաքական ազդեցության ընդլայնման հետ, որի արդյունքում երկու գերտերությունները կարողացան պահպանել համագործակցային հարաբերությունները։
6) Սպառազինությունների մրցավազքը, որ ծավալվել է սառը պատերազմի ժամանակ, մեծ վնաս է հասցրել ԽՍՀՄ–ի տնտեսությանը, ինչն էլ դարձել է խորհրդային գերտերության կործանման գլխավոր պատճառներից մեկը։
7) Սոցիալիստական համակարգի փլուզման արդյունքում միջազգային հարաբերությունների գործող համակարգը դադարեցրել է իր գոյությունը և առաջին անգամն էր, որ դա տեղի է ունեցել առանց պատերազմի։

61 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) Արդի Եվրոպայում ձևավորված միջազգային կրթական համակարգը հայտնի է Բոլոնիայի գործընթաց անունով:
2) Արևմտյան Եվրոպայում հետպատերազմյան շրջանում ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական մոդելը ստացել է բարօրության պետություն անվանումը:
3) Հունգարիայում, Ռումինիայում և Լեհաստանում ձևավորված սոցիալիստական հասարակությունը կոչվում էր «ինքնակառավարվող սոցիալիզմ»:
4) Արևմուտքի և Արևելքի զարգացած երկրներում ձևավորված արդի հասարակությունը հայտնի է արդյունաբերական հասարակություն անունով:
5) Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված աշխարհակարգը հայտնի է միաբևեռ աշխարհ անունով:
6) Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում 2003-2005 թթ. տեղի ունեցած իշխանափոխությունները հայտնի են «գունավոր հեղափոխություններ» անունով:
7) ԽՍՀՄ մշակույթի մեջ տիրապետող սկզբունքը կոչվում էր սոցիալիստական ռոմանտիզմ:
8) Նորագույն շրջանի մշակույթի առաջին փուլում տիրապետող ուղղությունը կոչվում է մոդեռնիզմ:

62 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Հարավսլավիայում գյուղատնտեսության կոլեկտիվացումը կատարվել է միայն կամավոր սկզբունքով։
2) Իրանում 1962 թ. սկսված բարեփոխումների շրջանը կոչվել է «սպիտակ հեղափոխության» շրջան։
3) Իտալիայում գրված «Հայերը՝ արիացիներ» աշխատության շնորհիվ հայ ժողովուրդը փրկվել է Գերմանիայի կողմից ռազմակալված տարածքներում ցեղասպանության ենթարկվելուց։
4) ԱՄՆ-ը Ճապոնիայի վրա ատոմային ռումբեր է նետել նրան անձնատվության ստիպելու և աշխարհին իր նորաստեղծ զանգվածային զենքը ցուցադրելու նպատակով։
5) Ստալինգրադի ճակատամարտում խորհրդային զորքերի հաղթանակն արագացրել է հակահիտլերյան կոալիցիայի ստեղծումը։
6) Պոտսդամի խորհրդաժողովում Թուրքիայից տարածքային պահանջների դիմաց ԽՍՀՄ-ը ստացել է Կուրիլյան կղզիները։
7) 1944 թ. աշնանը՝ Մուսոլինիի վարչակազմի տապալումից հետո, Իտալիան պատերազմ է հայտարարել Գերմանիային։
8) Մոսկվայի ճակատամարտում խորհրդային զորքերի հաղթանակից հետո Անգլիան հայտարարել է պատերազմում ԽՍՀՄ-ին աջակցելու մասին։

63 **Հայ մշակույթին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին նախագծել և կառուցել է Բագրատունիների արքունի ճարտարապետ Մանուելը:
2) Նոր Ջուղայի հայկական առաջին տպարանը ամբողջովին ստեղծվել է տեղում՝ չունենալով տպագրական գործի վարպետ:
3) Բագրատունյաց Հայաստանում, Զաքարյանների իշխանությունում, Կիլիկյան Հայաստանում մեծ վերելք է ապրել ամրոցաշինությունը:
4) Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Կոմիտաս կաթողիկոսը հորինել են շարականներ՝ եկեղեցական արարողություններին և տոներին երգելու համար:
5) Նարեկի վարդապետարանը իր զարգացման բարձրակետին հասել է աշխարհահռչակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ուսուցչապետության տարիներին:
6) Հայ պատմագրության մեջ համաշխարհային պատմության շարադրանքի ժանրը՝ որպես նոր ուղղություն, հիմնադրել է Մատթեոս Ուռհայեցին:
7) Կիլիկյան Հայաստանում կրթական գործի կազմակերպումը տնօրինում էր ոչ միայն Հայոց եկեղեցին, այլև՝ պետությունը:
8) Հայ պատմագրության մեջ ժամանակագրություն ժանրի հետևորդներ են Մովսես Կաղանկատվացին, Արիստակես Լաստիվերցին, Սմբատ Գունդստաբլը:

64 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) Հաճընում քեմալականների դեմ հայության ինքնապաշտպանությունը կազմակերպող մարմինը կոչվում էր ինքնապաշտպանության զինվորական կոմիտե:
2) Նորաստեղծ Խորհրդային Միության բարձրագույն օրենսդիր մարմինը ԽՍՀՄ պատգամավորների առաջին համագումարն էր:
3) ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովում կուսակցությունը կոչվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն»:
4) ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեն ստեղծեց երկրի գործադիր իշխանության նոր բարձրագույն մարմին՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ:
5) Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված Արևմտյան Հայաստանում 1916 թ. ամռանը ստեղծված վարչական միավորը կոչվեց հատուկ գեներալ-նահանգապետություն:
6) Իտալիայի Սան Ռեմո քաղաքում Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը մշակած մարմինը տերությունների Տասի խորհուրդն էր:
7) Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի բռնագրավման դեմ պայքարը գլխավորելու նպատակով ստեղծված մարմինը կոչվեց «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:
8) Միացյալ և ազատ Հայաստան հռչակելու անհրաժեշտության մասին բանաձև ընդունած մարմինը կոչվում է Արևմտահայերի 2-րդ համագումար:

65 **Արցախյան առաջին պատերազմի շրջանի իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Զանգելանի (Կովսական) շրջանի ազատագրումը:
2) ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը:
3) Լաչինի (Բերձոր) ազատագրումը:
4) Քարվաճառի շրջանի ազատագրումը:
5) Մարտակերտ քաղաքի ազատագրումը:
6) Քարինտակի մատույցներում հայկական ուժերի տարած հաղթանակը:

66 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Իտալական բանակի ներխուժումը Եթովպիա:
2) Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայից:
3) Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայից:
4) Խորհրդա-գերմանական չհարձակման համաձայնագրի կնքումը:
5) Ներուի ընտրվելը Հնդկական ազգային կոնգրեսի նախագահ:
6) «Մյունխենյան գործարք»-ի կնքումը:

67 **Բագրատունյաց արքաների կառավարման շրջանում տեղի ունեցած պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Անիի Սմբատաշեն պարիսպների կառուցումը:
2) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինայի վանք:
3) Ծումբի հաղթական ճակատամարտը:
4) Անիի հռչակումը հայոց մայրաքաղաք:
5) Դավիթ Անհողինի անհնազանդության սկիզբը:
6) Դողսի հաղթական ճակատամարտը:
7) Անիի Աշոտաշեն պարիսպների կառուցումը:

68 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Հնչակյան կուսակցության մասնաճյուղերի ստեղծումը Կարինում և Տրապիզոնում:
2) Մկրտիչ Ավետիսյանի, Մարտիրոս Սարուխանյանի, Ալեքսանդր Պետրոսյանի նահատակությունը:
3) Թուրքական իշխանությունների կողմից Պապիկ Նորաշխարհյանի ճանաչումը Զեյթունի քաղաքագլուխ:
4) Հալեպում հաշտության կնքումը թուրքական կառավարության և զեյթունցիների միջև:
5) Մկրտիչ Փորթուգալյանի վտարումը Վանից:

6) Սասունի ինքնապաշտպանական ժողովի գումարումը գյուղապետ Գրգոյի տանը:
7) Մալաթիայի հերոսամարտը Եղիշե քահանա Խաչատրյանի գլխավորությամբ:

69 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը:
2) Վաշինգտոնի խորհրդաժողովի հրավիրումը:
3) Իտալիայի միանալը Անտանտին:
4) Միջազգային կարմիր խաչի ընկերության ստեղծումը:
5) Վերսալի պայմանագրի ստորագրումը:
6) Անգլո-բուրական պատերազմի ավարտը:
7) Միջազգային օլիմպիական կոմիտեի ստեղծումը:

70 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Թեոդոսիոս I –ի կողմից Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասի:
2) Խաչակրաց առաջին արշավանքի սկիզբը:
3) Հայկական արքայատոհմի գահակալման ավարտը Բյուզանդիայում:
4) «Ժողովուրդների ճակատամարտը» Կատալաունյան դաշտում:
5) Վորմսի համաձայնագրի կնքումը:
6) Լատինական կայսրության ստեղծումը:
7) Յարմուքի ճակատամարտը: